

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ 2012

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները & տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի գործունեության

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 2011 թվականի տարեկան հաշվետվությունը կազմվել է «Հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող մարմնի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների դրույթներին համապատասխան և ամփոփ տեղեկություններ է պարունակում Հանձնաժողովի գործունեության, կարգավորվող ոլորտի կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումների, ինչպես նաև իր գործունեության ֆինանսական հաշվետվության մասին :

Հաշվետվությունը մշակվել և ամփոփվել է Հանձնաժողովի աշխատակազմի բաժինների կողմից ներկայացված տեղեկատվությունների հիման վրա և քննարկվել ու հաստատվել է Հանձնաժողովի 2012 թվականի ապրիլի 06-ի թիվ 6 նիստում :

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է եղել օրենքներով ամրագրված գործառույթների և Ազգային ժողովում հրապարակված 2011 թվականի գործունեության ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացմանը :

ՀԱՍՏՈՒՑ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը իրականացնում է հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորումը՝ նպատակ ունենալով օրենքով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների ու հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը, խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Կարգավորվող ոլորտներն են՝

ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.

բ) ջրային համակարգը, որը ներառում է խմելու, ոռոգման, արդյունաբերական ջրի մատակարարումը, ջրահեռացումը և կեղտաջրերի մաքրումը.

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառը.

դ) տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառը.

ե) փոստային կապի բնագավառը.

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառը՝ սակագների սահմանման և վերանայման մասով :

Նշված ոլորտներում ծագող հարաբերությունները կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին», «Փոստային կապի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման

մասին», «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, այլ օրենքներով:

Հանձնաժողովի կարևորագույն գործառնություններից է կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման և արդյունավետ ներդրումների խրախուսման ապահովման առաջնահերթություններից:

2011 թվականին Հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողով է ներկայացրել ճյուղային օրենքներում փոփոխություններ կատարելու վերաբերյալ 4 օրենքների նախագծեր, որոնք ընդունվել և ուժի մեջ են մտել 2011 և 2012 թվականներին:

Օրենսդրական փոփոխությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման ընթացքում Հանձնաժողովը ակտիվ համագործակցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության, հեռահաղորդակցության, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում՝ արտադրական ենթակառուցվածքների, տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում՝ տնտեսական զարգացման նախարարությունների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:

Նոյեմբերին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում Հանձնաժողովը հրապարակել է հաջորդ տարվա իր գործունեության ծրագիրը: Հանձնաժողովը իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որը ուներ հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- Հանրային ծառայությունների կարգավորման և սպառողների հետ կապերի բաժին,
- Տնտեսական, մրցակցային միջավայրի հետազոտության, վերլուծության և վարչական վարույթի բաժին,
- Հեռահաղորդակցության ոլորտի կարգավորման բաժին,
- Հաշվառման և վերահսկողության բաժին:

Հանձնաժողովի աշխատակազմի կողմից նախապատրաստվել է Հանձնաժողովի 21 հերթական, 5 համատեղ և 1 արտահերթ նիստ, որտեղ քննարկվել ու ընդունվել է 155 որոշում, այդ թվում՝ 29 նորմատիվ, 6 լուկալ և 120 անհատական ակտեր: Հանձնաժողովի նիստերին մասնակցել են պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նիստերի արձանագրությունների հիման վրա տրված արձանագրային հանձնարարականները կատարվել են ճիշտ և ժամանակին: Բացի դրանից Հանձնաժողովի նախագահի մոտ կայացած խորհրդակցությունների արդյունքներով տրվել են 26 հանձնարարականներ, որոնք կատարվել են սահմանված կարգով: Ստորագրվել է 167 հրաման, որոնք կրել են կադրային, գործառնական ու կազմակերպչական բնույթ:

Տարվա ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմ մուտք է գործել 1012 գրություն, ընդ որում՝ 96 նամակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունից և պետական կառավարման մարմիններից, 478-ը՝ փաստաթղթաշրջանառության գրություններ են, 329-ը՝ ստացվել են հիմնարկ-ձեռնարկություններից և այլ մարմիններից: 109 գրություններ լիցենզավորման ու սակագների վերաբերյալ հայտեր էին, որոնք տեղում ուսումնասիրվել են և ընթացքավորվել: Հանձնաժողովի ելից փաստաթղթերի ընդհանուր թիվը կազմել է 642 գրություն:

Ապրիլ-դեկտեմբեր ամիսներին Հանձնաժողովի պաշտոնական վեբ կայք է այցելել 2960 այցելու: Վեբ կայքում տեղադրվել է 26 հայտարարություն նիստերի անցկացման և 7 սեմինար-քննարկումների մասին, 61 տեղեկություններ տեղադրվել են նորությունների բաժնում: Հանձնաժողովի բոլոր նիստերը լուսաբանվել և հեռարձակվել են Արցախի հանրային հեռուստառադիոընկերությամբ: Հանձնաժողովի աշխատակիցները 7 անգամ հարցազրույց են տվել Արցախի հանրային հեռուստատեսությանը: Հանձնաժողովի նիստերից 7-ը լուսաբանվել է «Երկիր» էլեկտրոնային թերթով: Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող պետական և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովների հետ համատեղ նիստերը լուսաբանվել են նաև Հայաստանի Հանրապետության Հ 1 և Հ 2 ալիքներով: Երեք անգամ հարցազրույց է տրվել

«Ազատություն» ռադիոկայանին: Ընդհանրապես հրապարակային լսումներ են տեղի ունեցել 114 անգամ:

Համագործակցության շրջանակներում տեղի են ունեցել Հանձնաժողովի նախագահի, Հանձնաժողովի անդամների և աշխատակազմի աշխատակիցների 25 գործնական այցելություններ Հայաստանի Հանրապետության համապատասխան հանձնաժողովներ:

ԿԱՐԳԱԿՈՐԿՈՂ ՈՒՈՐՏՆԵՐԻ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՈՐԴՈՒԹՅԱՄԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանրային ծառայությունների ոլորտում 2011 թվականին կատարվել են զգալի աշխատանքներ *էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման և գազամատակարարման* համակարգերի կարգավորման իրավական դաշտի կատարելագործման ուղղությամբ: Այս ոլորտի վերաբերյալ ընդունվել է 9 նորմատիվ և 11 անհատական ակտեր:

Հաշվի առնելով էներգետիկայի բնագավառում լիցենզավորման գործընթացում պարբերաբար առաջացող խնդրահարույց հարցերը՝ նոր խմբագրությամբ մշակվել և հաստատվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, որով կրճատվել և հստակեցվել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց կողմից Հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը:

Մշակվել և հաստատվել է էներգետիկայի բնագավառում իրավաբանական անձանց միջև կնքվող մինչև 10 Սվտ տեղակայված հզորություն ունեցող արտադրող հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրաէներգիայի (հզորության) առուվաճառքի և ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը:

Իր գործունեության ընթացքում Հանձնաժողովը «էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով, գործունեության տարբեր տեսակների համար տրամադրել է 22 լիցենզիա:

Իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվել է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի, նվազագույն ծախսերի և ողջամիտ շահույթի ապահովման սկզբունքի վրա՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեությունը ապահովելու նպատակով, Հանձնաժողովը մշակել է աշխատառձ՝ ուղղված սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը:

«էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված լիցենզավորվող գործունեություն իրականացնելու համար իրավաբանական անձանց կողմից ներկայացված ընդհանուր-19.5 Սվտ դրվածքային հզորությամբ, 115.7 մլն. Կվտ/ժ տարեկան արտադրողականությամբ 5 («Իզոտոպ Դելտա» ՍՊԸ «Սյունիք-1» և «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Թրդի-2» հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության, «Պրոտոն» ՓԲԸ «Սյունիք-2», «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Մատաղիս-1» և «Մատաղիս-2» հիդրոէլեկտրակայանների կառուցման) հայտերը ուսումնասիրվել են և ընթացքավորվել:

Բավարարվել է ջրային համակարգից՝ «Ջրային տնտեսություն» ՓԲԸ կողմից ներկայացված հայտը՝ Հադրութի շրջանում ոռոգման համակարգի օգտագործման թույլտվություն ստանալու համար:

«Ջրամատակարարում և ջրահեռացում» ՓԲԸ-ի կողմից դեկտեմբերին ներկայացվել է հայտ՝ Ասկերանի և Մարտունու շրջանների թվով 19 համայնքներում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի օգտագործման թույլտվություն ստանալու համար և այդ հայտը սահմանված կարգով ընդունվել է ուսումնասիրության:

Հանձնաժողովի կողմից վերահսկվել է «Արցախ էներգո» ՓԲԸ, «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ, «Արցախ գազ» ՓԲԸ, «Ջերմային տնտեսություն» ՓԲԸ, «Արցախփոստ» ՓԲԸ, «Ջրմուղ կոյուղի» ՓԲԸ և «Ջրային տնտեսություն» ՓԲԸ լիցենզիաների պայմանները և թույլ տված թերությունների վերացման համար կատարվել են քննարկումներ ու տրվել մեթոդական ցուցումներ:

Հանձնաժողովի նիստերի ընթացքում սպառողների անունից բարձրացված բնակչության հուզող հարցերը ուսումնասիրվել են և ընթացքավորվել: Սպառողների իրավունքների իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով Հանձնաժողովի կողմից տրվել են լիցենզավորված անձանց լիցենզիայի պայմանների 123 կետերի վերաբերյալ պարզաբանումներ ու տեղադրվել վեբ կայքում:

Էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների ներկայացրած տեղեկատվությունները սպառողների սպասարկման որակի վեր վերաբերյալ ուսումնասիրվել, ամփոփվել և իրազեկվել են հանրությանը: Սպառողների բարձրացրած հարցերը Ընկերությունների կողմից ստացել են համապատասխան լուծումներ:

Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում «Արցախգազ» և «Արցախէներգո» ՓԲԸ-ները սպառողների կողմից ստացել են համապատասխանաբար 998 և 58 դիմում, դիմում-բողոքներ: Ստացված դիմումները, դիմում-բողոքները ուսումնասիրվել, քննարկվել և ընթացքավորվել են:

Հեռահաղորդակցության՝ այդ թվում հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում 2011 թվականին ընդունվել է 81 որոշում՝ որից 17-ը՝ նորմատիվ, 64-ը՝ անհատական:

Տարվա ընթացքում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում այցելությունների միջոցով ուսումնասիրվել են տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիա ստանալու թվով 33 հայտ: Հայտերի տվյալները ուսումնասիրելուց և ժամավճարների չափերը կարգավորելուց հետո տրամադրվել են համապատասխան լիցենզիաներ: Տրամադրվել է նաև Ստեփանակերտ քաղաքի և մի քանի շրջանների տարածքում ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման 1 լիցենզիա, ինչպես նաև շարժական ռադիոկապի համար ռադիոհաձախականության օգտագործման 1 թույլտվություն: Փոփոխություն է կատարվել 3 ռադիոհաձախականության օգտագործման թույլտվության պայմաններում: Դադարեցվել է ռադիոհաձախականության օգտագործման 3 թույլտվության և տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման 16 լիցենզիաների գործողությունը:

2011 թվականի վերջի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ռադիոհաձախականությունների օգտագործման համար տրամադրված թույլտվություն ունեին 20 տնտեսավարող սուբյեկտ, իսկ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման լիցենզիա՝ 54 տնտեսավարող սուբյեկտ:

Ընթացիկ տարում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում մատուցվող ծառայությունների սակագները նվազել են 2 փուլով՝ հուլիս և օգոստոս ամիսներին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից դեպի Հայաստանի Հանրապետություն կատարվող զանգերի սակագները՝ հունվարի 1-ի դրությամբ գործող սակագների համեմատ նվազել են միջինը 13.9%-ով,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ներքանցային զանգերի սակագները նվազել են միջինը 25.2%-ով,

«Պրեմիում» հեռախոսային քարտերով կատարվող զանգերի սակագները նվազել են միջինը 17.9%-ով,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կարճ հաղորդագրության (SMS) ծառայության սակագները նվազել են միջինը 33,3%-ով,

Ֆիքսված անլար միջերես (WLL) հեռախոսակապով կատարվող զանգերի սակագները նվազել են միջինը 17,9%-ով:

Բացի նշված միջոցառումներից՝ Հանձնաժողովի կողմից տրված համաձայնության հիման վրա տարվա ընթացքում ընկերության կողմից հայտարարվել են մի շարք հրապարակային օֆերտաներ, որոնց շնորհիվ.

բջջային հետվճարային, ֆիքսված և ֆիքսված անլար միջերես համակարգի բոլոր այն բաժանորդները, որոնց համարները գտնվում էին երկկողմանի անջատված կամ լուծարված կարգավիճակում հնարավորություն ստացան մարել պարտքերը աստիճանաբար՝ 3 ամսվա ընթացքում, իսկ «Շահավետ վերամիացում» հրապարակային օֆերտայի շնորհիվ բջջային հետվճարային, ֆիքսված և ֆիքսված անլար միջերես համակարգի բոլոր այն բաժանորդները, որոնց համարները գտնվում էին երկկողմանի անջատված վիճակում հնարավորություն ստացան

վերականգնել իրենց հեռախոսահամարները առանց վերամիացման վարձի՝ մարելով միայն կուտակված պարտքի գումարը:

1Մբիթ/վրկ արագությամբ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայության մատուցման սակագինը նվազեցվել է 90,5%-ով (93000.դ.-ից - 8799դ.), սահմանվել և վերանայվել է նոր՝ երաշխավորված մուտքով մեծածախ IP տարանցման սակագին:

Հաշվետու ժամանակաշրջանում *տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության* ծառայությունների սակագների նվազեցումը կատարվեց հատկապես DSL մոդեմով ինտերնետ կապի սակագների համար՝ մասնավորապես, Հանձնաժողովի վերլուծությունների և «Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ համատեղ քննարկումների արդյունքում մշակվեցին նոր, 53%-ով նվազեցված սակագների տարբերակներ: Նվազեցումը վերաբերվում էր ռադիոմոդեմ (անլարային) կապով ինտերնետ բաժանորդներին և սահմանափակ սակագնային պլանների բաժանորդներին տրամադրվող անվճար թրաֆիկի քանակի ավելացմանը և յուրաքանչյուր լրացուցիչ 1 Մբ թրաֆիկի արժեքի նվազեցմանը: Ցանկացած արագության դեպքում լրացուցիչ 1Մբ-ի արժեքը կազմեց 5 դրամ՝ գործող 9, 8, 7 և 6 դրամի փոխարեն: Մարտ ամսում սահմանվեցին նաև DSL մոդեմով անսահմանափակ մուտքով ինտերնետ կապի նոր սակագներ: Ինտերնետ կապի ամսավճարների նվազումը կազմեց միջինը 82%:

Հունիսին սահմանվել է նախկինում գոյություն չունեցող մեծածախ IP տարանցման սակագին, ինչպես նաև նվազեցվել են ռադիոմոդեմ անլարային կապով անսահմանափակ մուտքի ամսավճարը՝ 76%-ով և կորպորատիվ լոկալ ցանցի օտագործման սակագները՝ 67%-ով:

Նոյեմբերին 33%-ով նվազեցվել է մեծածախ IP տարանցման սակագինը, որը կազմել է 40 000 դրամ, նախկին 60 000 դրամի փոխարեն, ինչպես նաև սահմանվել են սակագներ նոր՝ մինչև 4 Մբ/վրկ և մինչև 6 Մբ/վրկ արագությունների համար:

«Ղարաբաղ Տելեկոմ» ՓԲ Ընկերության տվյալներով ապրիլի 30-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում առկա էին DSL մոդեմով անսահմանափակ մուտքով 128 բաժանորդ, իսկ տարվա վերջի դրությամբ, նշված միջոցառումների արդյունքում, բաժանորդների թիվը հասել է 5864 բաժանորդի:

Ընկերության տվյալներով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը՝ ընկերության բոլոր գործող տեխնոլոգիաներով օգտվող ակտիվ ինտերնետ բաժանորդների քանակը աճել է 2063 բաժանորդով՝ կազմելով տարվա սկզբին՝ 5897 բաժանորդ, իսկ տարվա վերջում՝ 7960 բաժանորդ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող Հանձնաժողովների համատեղ բանակցությունների արդյունքում՝ տարաբնույթ տեխնիկական լուծումներով և տարբեր ընկերությունների («ԱրմենՏել» և «ԶիէնՍի Ալֆա» ՓԲԸ-եր) կողմից կազմակերպվել են նոր միջազգային IP տարանցման օպտիկամանրաթելային և ռադիոռելեային կապուղիներ: Դրանով լուծվել է ոչ միայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող տեղեկատվական անվտանգության հարցը, այլ նաև տարածաշրջանում ձևավորվել է մրցակցային միջավայր: Արդյունքում տվյալ կապուղիներով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք մուտք գործող միջազգային IP տարանցման հոսքերի ընդհանուր թողունակությունը 2011 թվականի վերջում կազմում էր 425 Մբիթ/վ, որը տարեսկզբի համեմատությամբ աճել է մոտ 4 անգամ:

Կարգավորվող ընկերությունների գործունեությունը առավել թափանցիկ դարձնելու նպատակով հունիս ամսում ընդունվել է թվով 3 որոշում, որոնց հիման վրա տարվա ընթացքում կարգավորվող ընկերությունների կողմից Հանձնաժողով են ներկայացվում ոչ միայն ֆինանսական հաշվետվություններ, այլ նաև հաշվետվություններ.

• տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց կողմից Հանրապետության տարածքում գործող տեխնոլոգիաների միջոցով ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման դիմաց գոյացած հասույթի, օգտվող բաժանորդների քանակի, տեղեկատվության ծավալների վերաբերյալ, Հանրապետության տարածքից դուրս ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող անձանց ցանցերի հետ՝ ըստ միացման եղանակի փոխկապակցման կետերի քանակի, կապուղու թողունակության, 1 Մբիթ/վրկ արժեքի, մուտքային և ելքային փոխանակված տեղեկատվության ծավալի վերաբերյալ և ծառայությունների մատուցման փաստացի տարածքի վերաբերյալ,

• ամրակցված կապի և հանրային շարժական բջջային կապի ծառայություններ մատուցող ընկերության կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերում ամրակցված կապի միջոցների առկայության և հեռախոսաֆիկացման վերաբերյալ և հանրային շարժական բջջային կապի ծառայությունների մատուցման վերաբերյալ, շարժական բջջային կապի ծայնային ծառայության տրաֆիկի, ծառայության մատուցման դիմաց գոյացած հասույթի, հաղորդագրությունների քանակի, միջազգային ռուումինգ ծառայությունից օգտվողների քանակի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակավայրերում նոր հեռախոսային կայանների մոնտաժման տարեթվի, մոնտաժված ունակությունների, օգտագործված ունակությունների և տեղադրված բաժանորդային հեռախոսագծերի քանակի վերաբերյալ:

Մայիս-հունիս ամիսների ընթացքում` կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ինտերնետ ծառայության սակագների մոտ 80%-ով նվազեցման հետ` կատարվեց ինտերնետ ակումբներում կիրառվող ինտերնետ ծառայության ժամավճարի հիմնավորվածության ուսումնասիրություն:

Ստացված ծախսերի և եկամուտների հաշվետվությունների վերլուծությունից պարզվել է, որ տնտեսավարողների ինտերնետ ծառայության ծախսերը մարտ-մայիս ամիսների ընթացքում նվազել են միջինը 33-77%-ով: Ինտերնետ ակումբներում տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների ժամավճարի ուսումնասիրության և անցկացված դիտանցումների արդյունքների հիման վրա Հանձնաժողովը կարգավորել է ժամավճարի դրույթաչափը:

Էռուստատեսության և ռադիոյի բնագավառում 2011 թվականին Հանձնաժողովի կողմից ընդունվել է թվով 11 անհատական որոշում: Հայտարարվել են 1 հեռուստահաղորդումների հեռարձակման և 1 ռադիոհաղորդումների հեռարձակման մրցույթներ, ինչի արդյունքում լիցենզավորվել է մեկ ռադիոընկերություն:

Հանձնաժողովը հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում հայտարարել է հեռուստահեռարձակման համար նախատեսված թվով 4 հաճախությունների շերտերում հեռուստածրագրերի եթերային հեռարձակման լիցենզավորման մրցույթներ: Հայտարարված հանրապետական սփռման, ընդհանուր ուղղվածության հեռուստածրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու մրցույթներին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցելու հայտեր են ներկայացրել 2 ընկերություններ, սակայն սահմանված պահանջները չբավարարելու հետևանքով հաղթողներ չեն ձանաչվել:

Հայտարարվել և կայացել է Ստեփանակերտ քաղաքի և մի քանի շրջանների տարածքում, ընդհանուր ուղղվածության ռադիոհաղորդումների եթերային հեռարձակման լիցենզավորման մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել 1 ընկերություն և հայտը բավարարվել է:

Հանձնաժողովի կողմից տրված ռադիոհաղորդումների հեռարձակման և վերահեռարձակման լիցենզիաների հիման վրա այժմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործում են 8 ռադիոընկերություններ, որոնցից 5-ը իրականացնում են ռադիոհաղորդումների եթերային հեռարձակում, 2-ը` ռադիոհաղորդումների վերահեռարձակում, իսկ 1-ը` ռադիոհաղորդումների կաբելային (լարային) վերահեռարձակում:

Իրականացված ռադիոեթերի մոնիթորինգների արդյունքում հայտնաբերված իրավախախտումների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից հարուցվել են վարչական վարույթներ և կիրառվել պատասխանատվության միջոցներ:

Հանձնաժողովը **տնտեսական մրցակցությունը** դիտելով որպես շուկայական հարաբերությունները խթանող և կարգավորող ուժ ու ներկայիս համաշխարհային ճգնաժամային իրավիճակից դուրս գալու կարևորագույն միջոց` այդ բնագավառում իրականացրել է աշխատանքներ` ուղղված մրցակցային միջավայրի հետազոտությանը, գնային քաղաքականությանը, գերիշխող դիրքի և հակամրցակցային գործողությունների բացահայտմանը: Ընդունվել է այդ բնագավառին առնչվող 30 որոշում, որոնցից 28-ը` անհատական, 2-ը` նորմատիվ:

Հանձնաժողովի կողմից տարվա ընթացքում ուսումնասիրություններ են իրականացվել «Հաց», «Մակարոնեղեն», «Մսամթերք», «Նրբերշիկ», «Կարագ», «Պաստերիզացված կաթ», «Բենզին», «Դիզելային վառելիք», «Բնական գազ», «Սպառողներին մատուցվող տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցում», «Սպառողներին խմելու ջրի

մատակարարում և ջրահեռացում» ապրանքային շուկաներում, բացահայտվել և ճանաչվել են 2 մենաշնորհ և 13 գերիշխող դիրք ունեցողներ:

Մրցակցային իրավիճակի ուսումնասիրության համար առաջին անհրաժեշտության ապրանքային շուկաների ընտրությունն իրականացվել է՝ հաշվի առնելով նախորդ տարում ուսումնասիրությունների ժամանակ ի հայտ եկած խնդիրները: Գների դիտանցումը լինելով ապրանքային շուկաներում գնագոյացմանը հետևելուն և վերահսկելուն ուղղված միջոցառում և արհեստական գնաձի գսպման գործոն՝ Հանձնաժողովը իրականացրել է 35 ապրանքային շուկաներում պարենային ապրանքների մանրածախ գների 53 դիտանցում՝ թվով 60 առևտրի օբյեկտներում և կատարել դրանց արդյունքների վերլուծություն:

Հաց, կաթնամթերք, կենդանական յուղ, շաքար, շաքարավազ և այլ ապրանքային շուկաների դիտանցումները որոշակիորեն զսպել են գների արհեստական բարձրացման միտումները, իսկ որոշ դեպքերում էլ այդպիսի միտումները օրենսդրորեն կասեցվել են:

Այս կապակցությամբ 2011 թվականի ընթացքում 6 տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ վարչական վարույթ է հարուցվել: Վարույթի գործողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտները վերացրել են իրենց կողմից թույլ տրված թերությունները և Հանձնաժողովի համապատասխան որոշումներով կարճվել են հարուցված վարչական վարույթները:

Միևնույն ժամանակ Հանձնաժողովն աշխատանքներ է տարել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջաններում «մրցակցային մշակույթի» ձևավորման ուղղությամբ: Շրջանների խոշոր առևտրի կետերում իրականացվեցին ուսումնասիրություններ, ուշադրության կենտրոնում էր հատկապես առաջին անհրաժեշտության սպառողական ապրանքների շուկան: Արդյունքում՝ Հադրութ, Մարտունի և Շուշի քաղաքներում հայտնաբերվեցին մի շարք թերություններ:

Տարվա ընթացքում վարչական վարույթ է հարուցվել 7 տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ, ինչպես նաև համապատասխան որոշումներով տրվել նախազգուշացում, պարտավորեցվել հանել թերություններով առկա ապրանքները շրջանառությունից՝ խախտումները շտկելու և հետագայում բացառելու հանձնարարությամբ:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման նպատակով արձանագրվել է նաև առանց համապատասխան փաստաթղթերի տնտեսական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձ: Հետագա ընթացքը որոշելու նպատակով դիտանցման արդյունքում հայտնաբերված փաստի վերաբերյալ հավաքված նյութերը ուղարկվել են ըստ իրավասության:

Տեղի են ունեցել 15 հանդիպումներ վարչական վարույթ հարուցված տնտեսավարող սուբյեկտների պատասխանատուների հետ և տրվել համապատասխան օրենսդրական պարզաբանումներ:

Տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություն մատուցող «Տեխնոսերվիս» ՍՊԸ և **Փոստային կապի բնագավառում** լիցենզավորված «Արցախփոստ» ՓԲ ընկերության կողմից Հանձնաժողով են ներկայացվել եռամսյակային, կիսամյակային և տարեկան արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել են նրանց ֆինանսական գործունեության արդյունքների վերլուծություն և տրվել համապատասխան առաջարկություններ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից ստորագրված համաձայնագրերի շրջանակներում իրականացվել են մի շարք միջոցառումներ՝ համագործակցության, հեռահաղորդակցության բնագավառի կանոնակարգման և տնտեսական մրցակցության պաշտպանության խնդիրների, վարույթների իրականացման, տեղեկատվության տրամադրման, օրենսդրական ակտերի մշակման և կիրառման առումով:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը

կարգավորող պետական հանձնաժողովների համագործակցության համաձայնագրով հաստատված աշխատանքային ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակազմի մասնագետները մասնակցել են Հայաստանի Հանրապետությունում կազմակերպվող վերապատրաստման դասընթացներին և սեմինար պարապմունքներին: Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հանձնաժողովների նախագահների, անդամների և աշխատակազմերի կողմից կազմակերպվել են փոխադարձ այցելություններ:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ կնքած համագործակցության համաձայնագրի հիման վրա 2011 թվականին մշակվել է համատեղ գործունեության ծրագիր 2012 թվականի համար, որի շրջանակներում իրականացվելու են մի շարք միջոցառումներ ուղղված երկու մարմինների հետագա մերձեցմանը, պետական կարգավորման ոլորտներում օրենսդրությունների և կիրարկման մեխանիզմների ներդաշնակեցմանը, հանձնաժողովների համագործակցության զարգացմանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանձնաժողովի ինտեգրմանը միջազգային կառույցներում:

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների կողմից ստորագրված համագործակցության համաձայնագրով հաստատված աշխատանքային ծրագրի համաձայն 2011 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ, որոնց շրջանակներում կազմակերպվել են սեմինարներ-քննարկումներ, Հանձնաժողովի մասնագետները մասնակցել են գերմանական միջազգային ընկերության Է. Ֆեսի կողմից կազմակերպվող քննարկումներին, փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ: Հանձնաժողովի մասնագետները Աղվերան քաղաքում մասնակցել են սեմինարների, որոնց շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել Գերմանիայի, Լիտվայի և այլ միջազգային փորձագետների և լրագրողների հետ: Հանձնաժողովի մասնագետները մասնակցել են միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող սեմինարներին և տարաբնույթ միջոցառումներին Շվեյցարիայում և Լիտվիայում:

Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի միջև կնքված համագործակցության համաձայնագրով հաստատված աշխատանքային ծրագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում Հանձնաժողովի աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով այցելել են Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով: Մայիս և հոկտեմբեր ամիսներին Հանձնաժողովի ներկայացուցիչները մասնակցել են միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող կարգավորող մարմինների Եվրոպական Պլատֆորմ համաժողովներին, որոնք տեղի էին ունեցել Մակեդոնիայում և Բելգիայում: Հանձնաժողովի ներկայացուցիչը հոկտեմբերին Թբիլիսի քաղաքում մասնակցել է «Բազմակարծությունը և համացանցի կառավարումը» համաժողովին:

Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի գործընկերների և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովների մասնագետների մասնակցությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ ուղղված «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի փոփոխության հիմնավորմանը, վարույթների իրականացմանը, օրենսդրական ակտերի մշակմանը և կիրառմանը:

Համագործակցության շրջանակներում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը իրենց իրավասություններին համապատասխան հրապարակել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի պաշտոնական տեղեկագրերը, որոնց նպատակն է հանրությանը պարբերաբար իրազեկել հանրային ծառայությունների և տնտեսական մրցակցության ոլորտներում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և

տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերի մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հանձնաժողովը 2011 թվականին իրականացրել է համապատասխան օրենսդրական, մեթոդական, հսկողական և վերահսկողական աշխատանքներ՝ ապահովելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի 322 944 090 դրամ մուտքեր, այդ թվում՝

պետական տուրքեր՝ 21 141 000 դրամ,

կարգավորման պարտադիր վճարներ՝ 61 650 442 դրամ,

ռադիոընկերությունների լիցենզիային վճարներ՝ 140 000 դրամ,

ռադիոհաձախականության թույլտվության տրամադրման վճարներ՝ 271 000 դրամ,

ռադիոհաձախականության օգտագործման վճարներ՝ 239 420 498 դրամ,

տույժեր՝ 221 150 դրամ,

տուգանքներ՝ 100 000 դրամ:

Հանձնաժողովի և հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախսերը իրականացվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն: Ըստ բյուջետային ֆինանսավորման հայտի (նախահաշվի) պահպանման ծախսերը հաստատվել են 61 341 300 դրամ՝ դրամարկղային ծախսը կազմել է 56 163 424 դրամ կամ կատարվել է 91.6 տոկոսով:

Ի մի բերելով կատարված աշխատանքները և ստացված արդյունքները կարելի է ամրագրել, որ, չնայած բավականին աշխատանքներ են տարվել կարգավորվող ոլորտներում առկա իրավիճակի բարելավման ուղղությամբ, այնուամենայնիվ, դեռևս առկա են կարգավորման ենթակա բազմաթիվ ուղղություններ, որոնք կարևոր և ազդեցիկ նշանակություն ունեն տնտեսական պայմանների արդյունավետության ապահովման, հասարակության կենսամակարդակի բարձրացման և մրցակցային միջավայրի լավարկման համար: Այդ նպատակով Հանձնաժողովը նախատեսում է հետևողականորեն իրականացնել հաստատված ծրագրերը և միջոցառումները՝ ապահովելու օրենսդրությամբ ամրագրված պարտականությունների կատարումը՝ ուղղված հանրային ծառայությունների, տնտեսական մրցակցության պաշտպանության ու հեռուստատեսության և ռադիոյի բնագավառներում կարգավորվողների և սպառողների շահերի հավասարակշռմանը, հանրության կողմից բարձրացվող խնդիրների, առաջարկությունների արդարացի և անկողմնակալ քննարկամանն ու լուծմանը: